ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

Ի պատասխան 26.03.2025թ. հ.57-2025թ. գրության՝ տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության ծրագրերով տանիքների նորոգման, այդ թվում նաև տանիքներից ձնահոսքի կանխարգելիչ միջոցառումների (եզրաթիթեղի կամ ձնարգելի տեղադրում) աշխատանքներ չեն իրականացվում:

Համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի՝ բազմաբնակարան շենքի տանիքներն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին և դրանց պահպանումն ու վերանորոգումը պետք է իրականացվի կառավարման մարմնի կողմից՝ սեփականատերերի կողմից կատարված պարտադիր նորմերի վճարների միջոցով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ